Արձանագրություն N 3

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար անհրաժեշտ համակարգչային սարքերի ձեռք բերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/24» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«11» «Մայիսի» 2021թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ա. Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ	Ա. Մելքոնյան, Ա.Սայադյան, Ա.Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Մանուկյան)

Ընդունել ի գիտություն, որ 04.04.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի ապրիլի 20-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի ապրիլի 21-ին ժամը 14:00-ին: 2022 թվականի ապրիլի 25-ին ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Բի Լայն» ՍՊԸ	info@bi-line.am	02522096
2	«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ	vahe@doxx.am	04718853
3	«Տեխնոֆորում» ՍՊԸ	info@technoforum.am	01253291

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Մանուկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Մանուկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ «Բի Լայն» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) մեջ առկա է առերևույթ բացթողում՝ հրավերի պահանջների անհամապատասխանություն, որոնք շտկման կարիք ունեն: Մասնավորապես՝ մասնակցի առաջարկը ներառում է գնման հայտով սահմանված ծրագրասարքավորումային համալիր համակարգի տեխնիկական բնութագրի ոչ բոլոր բաղադրիչները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետերի պահանջները գնահատող հանձնաժողովը 2023 թվականի ապրիլի 25-ին կայացրել է որոշում մեկ աշխատանքային օրով կասեցնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումը և տալ վերջինիս հնարավորություն շտկելու արձանագրված ամահամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել է «Բի Լայն» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անճշտությունը՝ մանրամասն նշելով վերջինս: «Բի Լայն» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անճշտությունը և էլեկտրոնային աճուրդ համակարգ է ներբեռնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Մանուկյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 21.04.2023թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մանուկյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 12.04.2023թ.-ին ստացվել է հարցում, որին էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 13.04.2023թ. ներկայացվել է պարզաբանում, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համաձայն հրավերի վերաբերյալ ստացված հարցման վերաբերյալ տրամադրված պարզաբանման մասին հայտարարությունը հրապարակվել է gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Ա. Մանուկյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/24» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել՝ «Բի Լայն» ՍՊԸ-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Մանուկյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/24» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Բի Լայն» ՍՊԸ-ը 311,850,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Դոքս Քոմպյուտր» և «Տեխնոֆորում» ՍՊԸ-ների հայտերը:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/24» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.05.2023թ.-ից մինչև 21.05.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մանուկյան

Անդամներ՝ ---------- Ա. Մելքոնյան

---------- Ա. Սայադյան

_____ Ա. Մուրադյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԲԸ կարիքների համար «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները 21.04.23թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Անվանումը	Քանակ	Նախահաշվայինգումար	«Բի Լայն» ՍՊԸ			«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ			«Տեխնոֆորում» ՍՊԸ		
				վերջնական առաջարկ			վերջնական առաջարկ			վերջնական առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար
1	Համակարգչային սերվերներ	1	319,933,200	259,875,000	51,975,000	311,850,000	262,500,000	52,500,000	315,000,000	273,335,000	54,667,000	328,002,000